

Ա Ր Յ Ա Խ -  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ✓

ՌՈՒՄԲԵՐ ԳՈՐԻՍԻ  
ԵՒ  
ԿԱՊԱՆԻ ՎՐԱՅ

6 ՄԵՌԵԱԼ, 15 ՎԻՐԱԻՈՐ  
10 ՏՈՒՆ ՔԱՐՈՒՔԱՆԴ

Ազրբեջանական «ՍՈՒ -- 25» օդանավը որ Օդոստոս 20-ին ուժրակոծած է Մարտակերտի Չլդրան գիւղը, վար առնուած է հայ մարտիկներու կրակոցներով: Ծանր մարտերէ ետք հայկական ջոկատները ետ քաշուած են շրջանի Մեծչէն գիւղէն եւ Մարտանդի ամբարտակէն: Սպաննուած են երկու հայ մարտիկներ. թշնամին ունի մօտ 10 հոգիի կորուստ:

Ազրբեջանի ուժերը Օդոստոս 20-ին օդային յարձակումի ձեռնարկած են նաեւ Մարտունիի շրջանային կեդրոնին կարմիր շուկայ գիւղին վրայ, զգալի վնաս սպառնաւորով խաղաղ բնակչութեան: Գիշերային կրակոցներու հետեւանքով Բերդաշէն գիւղէն բնակիչ մը վիրաւորուած է, նաեւ ձարտար գիւղին մէջ մարտիկ մը: Նախորդ օրն ալ Հադրութի Աղոխ գիւղին մէջ 19-ամեայ սպտանի մը սպաննուած է ազրբեջանական կրակոցներէն:

Օդոստոս 20-ին հրետանային կրակոցներէ ետք ազրբեջանական հետեւակը յարձակումի ձեռնարկած է Գորիսի Շուռնուխ գիւղին վրայ, սակայն հայ մարտիկներու դիմադրութեամբ նահանջած է: Հրետանային կրակը շարունակուած է Շուռնուխ, Տեղ, Խնձորեսկ եւ Կոռնիձոր գիւղերուն վրայ:

Այս շրջանին վրայ ուժրակոծութիւնները մասամբ դադրած էին Օդոստոս 21-ին, Ուրբաթ առաւօտ, երբ կը խօսէինք Երեւանի հետ: Բայց, նախորդ օրուան գնդակոծումներու հետեւանքով 5 մեռեալ կար Գորիսի Տեղ գիւղը, մէկ ալ նոյն շրջանին մէջ, 15 վիրաւոր ալ կար եւ տասը տուն քարուքանդ եղած էին:

Հայկական ուժերն ալ ուժրակոծած են Ղուրաթլին ինչ որ վերջ տուած է Գորիսի վրայ ուժրակոծութեան, բայց Աղիւրիներու յարձակումները կը շարունակէին Կապանի վրայ:

\*\*

Օդոստոս 20-ին ազրբեջանական Քելրաչարէն կարճատեւ հրետակոծութեան ենթարկած են Վարդենիսի Նորարակ գիւղը: Հայ սահմանապահները յաջողած են լռեցնել թշնամին: Կորուստներ չկան: Կէսօրին ալ ութ հրթիռ արձակուած է Լաչինի անցքին վրայ: Վիրաւորներ չկան:

\*\*

Ինչ կը վերաբերի Արցախի իշխանութեանց, թիւրխմացութեան հետեւանքով է որ հազորդուած էր թէ Օլէգ Եսայեանի Ա. տեղակալը՝ Բորիս Առուշանեան վարչապետ դարձած է: Ուրբաթ առաւօտ (Օդոստոս 21) Երեւանէն ճշգեցին թէ Առուշանեան կը մնայ տեղակալ եւ թէ ցնոր անօրինութիւն Ռոպէր Քոչարեանի գլխավորութեան կազմուած պաշտպանութեան Խորհուրդն է, որ կը վարէ Արցախի գործերը:

\*\*